«ԳՀԱՊՁԲ-2018/8-1-ԵՊԲՀ» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

«ԵՊԲՀ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԳՀԱՊՁԲ-2018/8-1-ԵՊԲՀ-3»

ք. Երևան «14» «03» 2018թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ-ը ի դեմս **ռեկտոր Ա.Ա.Մուրադյան**-ի, որը գործում է հիմնադրամ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Պատրոն ՌՄ» ՍՊԸ**-ը, ի դեմս **տնօրեն Կարեն Սուքիասյան**-ի, որը գործում է ընկերություն-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ջնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***942000 (ինը հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ***, **ներառյալ ԱԱՀ-ն**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[2]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[3]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին

ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է **23** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ	**«Պատրոն ՌՄ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**Հասցե՝ ք.Երևան,Վարդանանց 18/2**
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	**Բանկ՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ**
h/h 11500166513800	**Հ/Հ 1660000446270100**
ՀՎՀՀ 01503448	**ՀՎՀՀ 00861057**
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	**Տնօրեն՝ Կարեն Սուքիասյան**
----------	----------
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«14» «03» 2018 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/8-1-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	քանակը	մատակարարման		
									հասցեն	մոտավոր ամսաթիվը	ժամկետը**
17	30121500	Քարտրիջ 17/ *HP*	Hewlett-Packard Ճապոնիա	HP LJ CF226A (№26A) BLACK, HP LaserJet Pro M402 MFP M426 տպիչի համար: Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի	հատ	**61740**	**61740**	**1**	**ք.Երևան, Կորյունի 2**	**1**	Ապրանքների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում

				գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:							
27	30121500	Քարտրիջ 27 / HP	Hewlett-Packard / Չինաստան	CANON FX-9/10 (0263B002AA) Canon i-SENSYS MF4010 ԲՖՍ համար: Պարտադիր պայմաններ՝ Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է	հատ	**33810**	**67620**	**2**	**ք.Երևան, Կորյունի 2**	**2**	Ապրանքների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում

				պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:							
35	30121500	Քարտրիջ 35 / HP	Hewlett-Packard / Չինաստան	CANON EP-26/27 Canon Laser Base MF3220 ԲՖՍ համար: Պարտադիր պայմաններ՝ Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:	հատ	**29850**	**59700**	**2**	**ք.Երևան, Կորյունի 2**	**2**	Ապրանքների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում
36	30121500	Քարտրիջ	Hewlett-	HP LJ Color	հատ	**55650**	**111300**	**2**		**2**	Ապրան

		36 / HP	Packard / Ճապոնիա	CP2025/CM2320 CC530A (№304A) BLACK, Canon i-SENSYS MF724Cdw ԲՖՍ համար: Պարտադիր պայմաններ՝ Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:							քների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում
41	30121470	Տոներ 2 / HG	Handan Hanguang OA Toner Co.,Ltd / Չինաստան	Տոներ HP LaserJet P1005 (35A) լազերային տպիչի համար, 1կգ. (HG361)	հատ	**4650**	**372000**	**80**	**ք.Երևան, Կորյունի 2**	**80**	Ապրան քների մատակարարումը իրականացվու

											մ է 30 օրացուցային օրվա ընթացքում
49	30121450	Թմբուկ 2 / HG	Handan Hanguang OA Toner Co.,Ltd / Չինաստան	Թմբուկ 12A HP 1010/1020/1022 լազերային տպիչների համար	հատ	**420**	**12600**	**30**	**ք.Երևան, Կորյունի 2**	**30**	Ապրանքների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում
50	30121450	Թմբուկ 3 / HG	Handan Hanguang OA Toner Co.,Ltd / Չինաստան	Թմբուկ 35A/78A/85A HP P1005/M1536dnf/M1212nf լազերային տպիչների համար	հատ	**420**	**50400**	**120**	**ք.Երևան, Կորյունի 2**	**120**	Ապրանքների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում
51	30121450	Թմբուկ 4 / HG	Handan Hanguang OA Toner Co.,Ltd / Չինաստան	Թմբուկ 15A/15X HP Laser Jet 1000/1200 լազերային տպիչների համար	հատ	**465**	**9300**	**20**	**ք.Երևան, Կորյունի 2**	**20**	Ապրանքների մատակարարումը իրականացվու

											մ է 30 օրացուցային օրվա ընթացքում
52	30121450	Թմբուկ 5 / HG	Handan Hanguang OA Toner Co.,Ltd / Չինաստան	Թմբուկ 05A/05X/80A/80X HP Laser Jet 2055 լազերային տպիչների համար	հատ	**489**	**9780**	**20**	**ք.Երևան, Կորյունի 2**	**20**	Ապրանքների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում
53	30121450	Թմբուկ 6 / HG	Handan Hanguang OA Toner Co.,Ltd / Չինաստան	Թմբուկ 49A/53A HP Laser Jet 1320/2015 լազերային տպիչի համար	հատ	**492**	**4920**	**10**	**ք.Երևան, Կորյունի 2**	**10**	Ապրանքների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում
54	30121450	Թմբուկ 7 / SGT	«Վ. Մ.» ՓԲԸ / Չինաստան	Թմբուկ 61A/61X HP Laser Jet 4100 լազերային տպիչի համար	հատ	**1500**	**3000**	**2**	**ք.Երևան, Կորյունի 2**	**2**	Ապրանքների մատակարարումը իրականացվում

											մ է 30 օրացուցային օրվա ընթացքում
56	30121450	Մագնիսական վալ 1 / Hi-Black	«ՎՏՏ-Դոն» ՍՊԸ / Չինաստան	Մագնիսական վալ (Mag Roller) 12A HP Laser Jet 1022 լազերային տպիչների համար	հատ	**450**	**900**	**2**	**ք.Երևան, Կորյունի 2**	**2**	Ապրանքների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում
57	30121450	Մագնիսական վալ 2 / Hi-Black	«ՎՏՏ-Դոն» ՍՊԸ / Չինաստան	Մագնիսական վալ (Mag Roller) 35A/78A/85A/ HP Laser Jet 1005 լազերային տպիչների համար	հատ	**480**	**4800**	**10**	**ք.Երևան, Կորյունի 2**	**10**	Ապրանքների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում
59	30121450	Բաժնավորիչ սայր 1 / Patron	«Վ. Մ.» ՓԲԸ / Չինաստան	Բաժնավորիչ սայր (Doctor Blade) 12A HP LaserJet 1010/1020/1022 լազերային տպիչների համար (LP104M)	հատ	**330**	**26400**	**80**	**ք.Երևան, Կորյունի 2**	**80**	Ապրանքների մատակարարումը իրականացվու

											մ է 30 օրացուցային օրվա ընթացքում
60	30121450	Բաժնավորիչ սայր 2/ Hi-Black	«ՎՏՏ-Դոն» ՍՊԸ / Չինաստան	Բաժնավորիչ սայր (Doctor Blade) 15A/15X HP LaserJet 1200 լազերային տպիչների համար (LP80M)	հատ	**342**	**10260**	**30**	**ք.Երևան, Կորյունի 2**	**30**	Ապրանքների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում
61	30121450	Բաժնավորիչ սայր 3/ Hi-Black	«ՎՏՏ-Դոն» ՍՊԸ / Չինաստան	Բաժնավորիչ սայր (Doctor Blade) 05A/05X HP Laser Jet 2055 լազերային տպիչի համար	հատ	**330**	**9900**	**30**	**ք.Երևան, Կորյունի 2**	**30**	Ապրանքների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում
76	31211350	Թմբուկ 9 / HG	Handan Hanguang OA Toner Co.,Ltd / Չինաստան	Թմբուկ Canon iR2525, 2520 պատճենահանող մեքենաների համար	հատ	**3570**	**107100**	**30**	**ք.Երևան, Կորյունի 2**	**30**	Ապրանքների մատակարարումը իրականացվում

											մ է 30 օրացուցային օրվա ընթացքում
77	31211350	Թմբուկ 10 / HG	Handan Hanguang OA Toner Co.,Ltd / Չինաստան	Թմբուկ Canon iR2016 պատճենահանող մեքենայի համար	հատ	**2220**	**6660**	**3**	**ք.Երևան, Կորյունի 2**	**3**	Ապրանքների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում
78	39260000	Մաքրող դանակ 1/ Hi-Black	«ԿՏՏ-Դոն» ՍՊԸ / Չինաստան	Մաքրող դանակ Canon iR2016 պատճենահանող մեքենայի համար	հատ	**1350**	**2700**	**2**	**ք.Երևան, Կորյունի 2**	**2**	Ապրանքների մատակարարումը իրականացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում
81	30200000	Կառատրոն 2 / Patron	«Վ. Մ.» ՓԲԸ / Չինաստան	Կառատրոն Canon iR 2016 պատճենահանող մեքենայի համար	հատ	**5460**	**10920**	**2**	**ք.Երևան, Կորյունի 2**	**2**	Ապրանքների մատակարարումը իրականացվու

											մ է 30 օրացուցային օրվա ընթացքում

րտադիր պայման է ապրանքների չօգտագործված լինելը

ակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

մատակարարվող ապրանքները պետք է ունենան համապատասխան արտադրողի սերտիֆիկատ, երաշխավորված մեկ տարի պահպանման ժամկետ, իսկ ոիջները՝ նաև իսկությունը ստուգելու հնարավորություն և պաշտպանված հոլոգրաֆիկ պիտակ:

ատաբաժիններում, որոնց անվանումներում և տեխնիկական բնութագրերում առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ ն, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը:

ԳՆՈՐԴ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր Ա.Ա. Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան,Վարդանանց 18/2
Բանկ՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057

Տնօրեն՝ Կարեն Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«14» «03» 2018 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/8-1-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
17	30121500	Քարտրիջ 17/ *HP*	0	0	61740	61740	61740	61740	61740	61740	61740	61740	61740	61740	**61740**
27	30121500	Քարտրիջ 27 / HP	0	0	67620	67620	67620	67620	67620	67620	67620	67620	67620	67620	**67620**
35	30121500	Քարտրիջ 35 / HP	0	0	59700	59700	59700	59700	59700	59700	59700	59700	59700	59700	**59700**

| | | |

56	30121450	Մագնիսական վալ 1 / Hi-Black	0	0	900	900	900	900	900	900	900	900	900	900	**900**
57	30121450	Մագնիսական վալ 2 / Hi-Black	0	0	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	**4800**
59	30121450	Բաժնավորիչ սայր 1 / Patron	0	0	26400	26400	26400	26400	26400	26400	26400	26400	26400	26400	**26400**
60	30121450	Բաժնավորիչ սայր 2/ Hi-Black	0	0	10260	10260	10260	10260	10260	10260	10260	10260	10260	10260	**10260**
61	30121450	Բաժնավորիչ սայր 3/ Hi-Black	0	0	9900	9900	9900	9900	9900	9900	9900	9900	9900	9900	**9900**
76	31211350	Թմբուկ 9 / HG	0	0	107100	107100	107100	107100	107100	107100	107100	107100	107100	107100	**107100**
77	31211350	Թմբուկ 10 / HG	0	0	6660	6660	6660	6660	6660	6660	6660	6660	6660	6660	**6660**
78	39260000	Մաքրող դանակ 1/ Hi-Black	0	0	2700	2700	2700	2700	2700	2700	2700	2700	2700	2700	**2700**

81	30200000	Կառատրոն 2 / Patron	0	0	10920	10920	10920	10920	10920	10920	10920	10920	10920	10920	**10920**

ԳՆՈՐԴ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր Ա. Ա. Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան,Վարդանանց 18/2
Բանկ՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057

Տնօրեն՝ Կարեն Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » « » 2018 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/8-1-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ

« » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը

հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
	Կ.Տ.

Հավելված 3.1
« » « » 2018 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/8-1-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն